Պաշտոնական ընդդիմախոսություն

Լիանա Արաիկի Դալլաքյանի «Հայ կինն ամուսնական ավանդույթների համապատկերում (կրոնագիտական վերլուծություն)» Թ.00.05 Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ) մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հնուց անտի մարդկային հասարակության մեջ որոշված են եղել նրա անդամների տեղն ու դիրքը, պարտականություններն ու իրավունքները, որոնք տարբերվել են ըստ սեռատարիքային պատկանելության: Հայ իրականության մեջ դրանց պահպանմանն, անշուշտ նպաստել են սոցիալ-տնտեսական և պատմաքաղաքական իրավիճակը, սովորութային իրավունքը, եկեղեցին: Հայոց սովորութային համակարգում կին թե տղամարդ դաստիարակվում էին իրենց դերին լիարժեք ծառայելու գիտակցությամբ: Հայ կինը պարտավոր էր հետևել ընդունված ավանդական պարտադիր համարվող չափանիշներին՝ հնազանդություն, հավատարմություն, իր ու նոր ընտանիքի մշակութային միջավայրին հարմարվողականություն և այլն: Կյանքն ընտանեկան խիստ պայմանների մեջ էր մշակել որոշակի սովորութային օրենքներ, կանոնակարգումներ, որոնց հետևում էին սրբությամբ: Այս և այլ հարցերի մասին են վկայում ոչ միայն ազգագրական նյութերը, այլև եկեղեցական գրականությունն ու կանոնները, ձեռագիր մատյանները: Ժողովրդական ընկալմամբ ընտանիք, օջախ հասկացությունները հոմանիշ են և հաճախ գործածվել են տուն, ծուխ, իսկ երբեմն էլ տանտիրուհի, տանտիկին իմաստներով, քանզի ընտանիքի, տոհմի, ազգի հարստության, հարատևության, առողջ սերնդի բարեկեցության երաշխավորն ու պահպանողը տանտիկինն էր: Ահա այս սովորութային, ազգագրական և մասնավորաբար կրոնագիտական, իրավաբարոյական համատեքստով մի ուշագրավ աշխատություն է ներկայացված որպես պատմագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն:

Լիանա Դալլաքյանի թեկնածուական սույն ատենախոսությունը հետազոտական բազմոլորտ ամփոփ ուսումնասիրություն է, որում հատկապես կրոնագիտական

համակարգային վերլուծության է ենթարկվել ամուսնաընտանեկան հարաբերությունների համապատկերում հայ կնոջ տեղի ու դերի, կոչման, գործառույթների, իրավունքների, պարտականությունների, հասարակական կարգավիճակի և այլ կարևոր հիմնախնդիրների մի ամբողջ համալիր: Քննարկվող այս հարցերը կազմում են սույն ատենախոսության ուսումնասիրության առարկան, հիմնահարցեր, որոնք ուղղակիորեն արտացոլում են հայ ժողովրդի ինքնության, ինքնագիտակցության հոգեկերտվածքի դրսևորման ու զարգացման նկարագիրն ու հիմնախնդիրները պատմական քննարկվող ժամանակաշրջանների համատեքստում:

Սույն հետազոտության մեջ քննարկվում են այնպիսի խնդիրներ, որոնց վերաբերյալ ատենախոսի դիտարկումներն ամփոփիչ ու գրեթե ամբողջական են դարձնում հիմնախնդրի վերաբերյալ մինչ այդ եղած գիտական ձեռքբերումները, որոնց մի մասը կարելի է համարել նորույթային: Նորույթայիններից են. հայ կնոջ կերպարն ամուսնաընտանեկան հարաբերությունների և մայրության շրջանակներում, հիմնարար սկզբունքով արժեվորումը ընտանիքի ստեղծման և նրանում կնոջ դերակատարության կոչումն աստվածաբանության և կրոնագիտության դիրքերից, նորովի մեկնաբանությամբ հարստացնելն ամուսնաընտանեկան հարաբերություններում կնոջ դերակատարության ուսումնասիրության բնագավառում արդեն հայտնի փաստերն ու հետազոտական աշխատանքները, առանձնակի ընդգծելը հայ կնոջ դերակատարությունը ընտանիքի և ազգային ինքնության պահպանման գործընթացներում, տարաբնույթ աղբյուրների քննահամեմատական վերլուծությամբ ներկայացնել ներընտանեկան, ներազգային և ներեկեղեցական ավանդույթների համապատկերը: Դրանց թվում նաև համակողմանի ներկայացնել այնպիսի կարևոր հիմնահարցեր, ինչպիսիք են՝ անչափահաս աղջիկների ամուսնությունը, աղջիկների առևանգումը, բռնի ամուսնությունները, այլադավանների հետ ամուսնության խնդիրը, մերձամուսնությունների հարցը, անպտղության, հղիության և որդեծնության, այրի կանանց կարգավիճակի, միակնության և բազմակնության ու հարակից բազմաթիվ տարաբնույթ այլ հարցերի համակողմանի վերլուծությունը ժողովրդական ավանդույթների և եկեղեցահիրավական չափանիշների հաշվառման համակարգում:

Ատենախոսական թեմայի արդիականությունը պայմանավորված է փոխկապակցված մի շարք գործոններով: Ատենախոսական աշխատանքում համակողմանի վերլուծության են ենթարկվում մի խումբ հիմնահարցեր, որոնք մշտապես արդիական են և չեն կորցնում իրենց կարևորությունը հասարակական կյանքի զարգացման ողջ ընթացքում: Ընտանիքում կնոջ դերի ու գործառույթների ուսումնասիրությունը և վերլուծությունը խիստ արդիական է, քանզի ընտանիքն առաջնահերթ պետական ինստիտուտ է, այն դիտարկվում է որպես ազգային ինքնության պահպանման հիմնասյուն՝ ընտանիք-պետություն սյուները պահող, պահպանող իր հավատարիմ անդամներով և նրանց առաքելությամբ, որոնց թվում առանձնակի դերակատարություն ունի հայ կինը:

Սույն հետազոտության արդիականությունը վկայող փաստերից է այն, որ նրանում հայ իրականության մեջ ամուսնաընտանեկան ավանդույթներին և հայ կնոջն առնչվող կանոնական իրավունքին վերաբերող հիմնախնդիրները լուսաբանվում են նորովի, իսկ նախկինում ձևավորված մոտեցումները վերանայվում, վերարժեվորվում և քննարկվում են արդի պայմանների թելադրանքով:

Ատենախոսության մեջ վերանայվել, ճշգրտվել և հմակարգային տեսք է տրվել հայ կնոջն առնչվող տեսական մտքի և հայագիտության շրջանակներում մինչև օրս առկա ազգագրական, եկեղեցական կանոնագիտական, ծիսագիտական, սոցիոլոգիական և պատմագիտական մոտեցումներին:

Ատենախոսության արդիականության և գիտական նշանակության վկայություններից է նաև այն, որ անտիպ և հրատարակված սկզբնաղբյուրների, առկա հետազոտությունների հիման վրա հայ ժողովրդական ավանդույթների, սովորույթների, կանոնական իրավունքի համադրությամբ կատարվել է ամուսնաընտանեկան հարաբերություններին առնչվող տարատեսակ հարցերի համակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն:

Ընդգծենք, որ ատենախոսական աշխատանքը գրվել է մեթոդաբանական արդյունավետ սկզբունքներով՝ համադրական, համեմատական ու քննավերլուծական, որոնց արդյունքում քննվել և արժեվորվել է հավաքագրված նյութը, համադրվել և

համեմատվել առկա ուսումնասիրություններն ու հրատարակված սկզբնաղբյուրները, վերանայվել են քննարվող հիմնահարցերի հակասական և իրարամերժ մոտեցումները:

Թեկանծուական սույն ատենախոսությունը լայնածավալ և տարաբնույթ սկզբնաղբյուրների և գրականության վրա հիմնված խորքային վերլուծություն է: Հեղինակն օգտագործել է 212 միավոր սկզբնաղբյուր, գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ:

Աշխատանքը ստորաբաժանված է ներածության, երկու գլուխների, եզրակացության և օգտագործված գրականության ցանկի:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության արդիականությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ցույց են տրվում քննարկվող հիմնահարցերի մշակվածության աստիճանը, ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքները, հիմնավորվում վերլուծական աշխատանքի գիտական նորույթը և գիտագործնական նշանակությունը (4-17 էջ):

Ատենախոսության ռաջին գլխում («Հայ կնոջ ամուսնական կարգավիճակը կանոնական իրավունքի համապատկերում») ատենախոսը քննարկել է ամուսնաընտանեկան հարաբերությունների կարևոր հիմնախնդիրների մի ամբողջ շարք՝ կնոջը և ընտանիքին վերաբերող սուրբգրային և մատենագրական աղբյուրներում առկա պատկերացումներ, կանոնական իրավունքի տեսանկյունից ամուսնաընտանեկան հարաբերություններում կնոջ կարգավիճակ, չափահասության հարց, միակնություն, բազմակնություն, բռնի ամուսնություն, մերձամուսնություններ և այլադավանների հետ ամուսնություն, հայ իրականության մեջ խնամախոսության և նշանադրության կանոնանակ դրսևորումներ, ամուսնալուծություն, այրի կնոջ կարգավիճակ և այլն: Քննարկվող հիմնահարցերի այս լայն շրջանակը հեղինկաը ներկայացրել է եկեղեցական իրավունքի պատմաաղբյուրագիտական խորը վերլուծությամբ: 18-81 էջերն ընդգրկող բովանդակ հարցերի մի զգալի մասը առաջին անգամ են գիտական պատշաճ մեկնաբանություններով համալիր ներկայացվում:

Երկրորդ գլուխում («Կինը հայ ժողովրդկան ամուսնական ավանդույթների համատեքստում») ատենախոսը ներկայացնում է հայ կնոջ կարգավիճակի

փոփոխությունները հայ սովորութային իրավունքի տեսանկյունից, կնոջ մասին ավանդական պատկերացումներն ու մոտեցումները: Քննական վերլուծության են ենթարկվում հետևյալ հիմնախնդիրները՝ ընտանիքի ձևավորումը պատմական զարգացումը, ընտանեկան ավանդույթները, ամուսնության համար չափահասության խնդիրը, բռնի ամուսնությունների դրսևորումները, խնամախոսության և նշանադրության ժողովրդական ավանդույթները, հարսանեկան ծիսաշարը, երեխայի ծննդին վերաբերող ավանդույթները, այրի կանանց առնչվող հիմնախնդիրները, հայ կնոջ կարգավիճակի փոփոխություններն ընտանեկան փոխհարաբերություններում և այլն:

Ատենախոս Լիանա Դալլաքյանը կարողացել է բազմազան և բազմաբնույթ ուսումնասիրությունների համադրության և վերլուծության միջոցով ներկայացնել ընտանիքի ձևավորման աստվածաշնչյան ակունքները, մարդու արարման և որդեծնության, ընտանիքի ձևավորման, սուրբ Պսակի խորհրդի քրիստոնեական ըմբռնումները և դրանց դրսևորումները ժողովրդական ավանադույթների և սովորույթների մեջ: Ատենախոսության մեջ առկա հետևությունները, եզրակացություններն ու ընդհանրացումները հետազոտական առումով չափազանց ուշագրավ են:

Ատենախոսության արժանիքներից է այն, որ հեղինակը հայերեն և օտարալեզու փաստագրական հարուստ նյութերի օգտագործմամբ ձգտել է վեր հանել և համակողմանի քննական վերլուծության ենթարկել հայ կնոջ կերպարը մայրության, ընտանքի ստեղծման կանոնական իրավունքի և ամուսնական ավանդությների համադրության, ազգային ինքնության պահպանման համատեքստում:

Գնահատելի կողմերից մեկն էլ այն է, որ ատենախոսը բարեխղճորեն հաշվի առնելով նախորդների գիտական ձեռքբերումները և ըստ արժանվույն գնահատելով հետազոտողների վաստակը, ընդլայնել ու խորացրել է հարցի ուսումնասիրությունը:

Ատենախոսը կարողացել է իրականացնել միջգիտակարգային հետազոտություն՝ ներկայացնելով թեմայի աստվածաբանական, կրոնագիտական, կանոնագիտական, եկեղեցագիտական և նաև ազգագրական կողմերը:

Ատենախոսությունն իր կառուցվածքով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Ատենախոսության քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ ատենախոսը գիտական պարբերականներում հրատարակել է 9 գիտական հոդված:

Ամփոփենք՝ պաշտպանության ներկայացվող ատենախոսությունը ուշագրավ գիտական հետազոտություն է:

Պատշաճը հատուցելով ատենախոսի պրպտուն, սկզբնաղբյուրների լայն ցանցի ընդգրկմանը, մեր կարծիքով ատենախոսությունն առավել շահեկան կլիներ, եթե հարգարժան ատենախոսը անդրադառնար հայ վաղ միջնադարյան սկզբնաղբյուրներից Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Խորենացու, Ագաթանգեղոսի աշխատություններին, առավել հանգամանալի օգտագործվեր Հովհան Մանդակունու հայ կնոջ կացության մասին դիտարկումները, հրահանգները, որոշ մատենագրական մեջբերումները հղվեին անմիջական սկզբնաղբյուրից: Լավ կլիներ գրականության ցանկում 71-84 կետերում հղված Ե. Լալայանի ազգագրական հանդեսներում հրատարակված ուսումնասիրությունների այդքան լայն հղման փոխարեն հիշատակել ընդամենը նրա երկերի 5 հատորյակը: Կարծում եմ օգտակար կլիներ նաև մեր կողմից հրատարակված որոշ այլ ուսումնասիրությունների օգտագործումը, որոնք անմիջականորեն առնչվում են ատենախոսական աշխատանքին. «Վաղ միջնադարյան Հայաստանի սոցիալական մշակույթի վերաբերյալ տեղեկությունները Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկում» («Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, ԵՊՀ Պատմության ֆակուլտետ, ԵՊՀ հրատ., 2018, էջ 336-347), «Ընտանեկան իրավունքն՝ ըստ վաղմիջնադարյան եկեղեցական կանոնական և աշխարհիկ աղբյուրների» («Գիտական հոդվածների ժողովածու», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, ԵՊՀ հրատ., 2010, էջ 34-41), «Քավորը՝ հայոց ամուսնահարսանեկան ծիսակարգում», («ՊԲՀ», 2007, Հ1, (174), էջ 123-137), «Կինը հայոց ավանդական ընտանիքում. ըստ սասունցիների ազգագրական սովորույթների» («ՊԲՀ», 2009, Հ1, (180), էջ 71-87):

Ատենախոսությունը գրված է սահուն, կիրթ հայերենով, սակայն տեղ են գտել մասնակի անճշտություններ, տեխնիկական վրիպումներ: Սրանք նկատառումների

շարքից են, որոնք բոլորովին չեն ստվերում ատենախոսության արժեքը, որոնք Լիանա Դալլաքյանը հաշվի կառնի ատենախոսության հրատարակության ժամանակ, ինչը խիստ անհրաժեշտ է:

Հանձին այս ատենախոսության՝ մենք գործ ունենք տարիների գիտահետազոտական տքնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող մի կարևոր ուսումնասիրության հետ, որի արժեքն անգնահատելի է: Լիանա Դալլաքյանի ատենախոսությունը (176 էլեկտրոնային էջ) համապատասխանում է Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թվանիշին և ԲՈԿ-ի ներկայացվող բոլոր պահանջներին, ուստի, միջնորդում եմ, որ ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի գիտական աստիճաններ շնորհող հարգարժան խորհուրդը Լիանա Արաիկի Դալլաքյանին շնորհի պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա աներկբա արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ. Ռ. Ա. Նահապետյան

Ռ. Նահապետյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար՝

բ.գ.թ. Մ. Հովհաննիսյան

02.06.2025